

## 80-ԱՄԵԱԿ ՀԱՅՈՑ ՑԵՂԱՍՊԱՆՈՒԹԵԱՆ

Ցեղասպանությունը մարդկության դեմ ոճի՛ր հռչակուած է:

Մոռացությունը՝ անոր հաւատարիմ մեղսակի՛ցն է:

— Հայոց Ջարդը այլեւս ո՛վ կը յիշէ, ըսած էր մեծ ցեղասպան մը:

Ո՛չ մէկ ցեղասպանութիւն լրի՛ւ կը յաջողի եթէ նաեւ չմոռցուի՛:

Մոռացությունը ապաստա՛նն է ցեղասպանին:

Եղեռնի փաստաթուղթերուն հաւաքումը՝ զէ՛նք է այս մոռացութեան դէմ:

Բայց այս հաւաքումը մեր մօտ՝ չէ եղած կազմակերպուած եւ հետեւողական աշխատանք, որովհետեւ մինչեւ վերջերս՝ անոր ձեռնարկած են անհա՛տ ուսումնասէրներ, որոնց որոնումները կիսաւարտ մնացած են, անոնց միջոցներուն եւ կեանքի՛ն սահմանափակութեան պատճառով:

Այսօր՝ Հաստատութիւններ կը փորձեն անոնց գործը շարունակել:

Անոնցմէ է Հայկազեան Համալսարանական Գոլէճի Հայագիտական Ամպիոնը եւ անոր լոյս ընծայած «Հայկազեան Հայագիտական Հանդէս»ներու շարքին՝ նաեւ ա՛յս ԺԵ. հատորը:

Այս հատորը գիտակա՛ն գործ է:

Ան չ՛ողբար, չի՛ բողոքեր, կը վկայէ՝ փաստերով:

Կը վկայէ Հայոց դէմ գործուած Ցեղասպանութեան մասին:

Կը պահանջէ պատմական ճշմարտութեան վերահաստատում, որուն կը յաջորդէ վնասուց հատուցում:

Այս գործին կը ձայնակցին տարբեր ազգերու աղբիւրներ, որոնց միջեւ հասարակաց գիծը՝ անաչառութիւնն է:

Այս հատորը անաչա՛ռ գործ է:

Պատմութիւնը դէպքեր ունի, կի՛րք չունի:

Այս հատո՛րն ալ:

Պատմութիւնը եթէ խի՛ղճ չունենայ, Պատմութի՛ւն չ'ըլլար:

Այս հատո՛րն ալ:

Ծճմարտութիւնը փնտռել Պատմութեան մէջ, Աստուա՛ծ փնտռել է:

Ցեղասպանութեան հատուցումը պէտք չէ՝ մնա՛յ միա՛յն Աստուծոյ գործը:

Արդարութիւն գործող մարդիկը Աստուծոյ գործակիցներն են:

Այս հատորը Արդարութեա՛ն գործ է,

յանո՛ւն Հայ Ժողովուրդին,

յանո՛ւն արդա՛ր Աստուծոյ:

**ԽՄԲԱԳՐՈՒԹԻՒՆ**

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿԱԶՄ**

Դոկտ. Արշալոյս Հ. Թոփալեան

Պրն. Լեւոն Վարդան

Պրն. Ժիրայր Դանիէլեան

Պրն. Անդրանիկ Տազէսեան

**ՊԱՏԱՍԽԱՆԱՏՈՒ ԽՄԲԱԳԻՐ**

Հայր Անդրանիկ Վրդ. Կռանեան

# THE 80TH ANNIVERSARY OF THE ARMENIAN GENOCIDE

Genocide is a proclaimed crime against humanity.

Through the act of forgetting any genocide, we become its faithful accomplices.

«Who remembers the Armenian massacres?» once asked a notorious criminal.

A genocide is never fully accomplished if it is remembered.

Forgetfulness on the part of community at large is the safe haven of the criminal.

Collecting the documents pertaining to the Armenian Genocide is the weapon against it sinking into oblivion.

But the act of collecting these documents has so far not been carried out in an organized and consistent way: it has been the endeavor of the dedicated individual researcher who, unfortunately, cannot bear the huge burden of historic investigation by himself.

Today institutions are trying to continue this work.

This is the mission of the Chair of the Armenian Studies at Haigazian University College, especially through its annual publication of the *Haigazian Armenological Review*.

The 15th volume is dedicated to the Genocide.

This volume is a work of scientific investigation.

It does not mourn, does not protest: it bears witness through facts.

It documents the Genocide committed against the Armenians.

It demands the reassertion of historical truth, a truth that must be acknowledged by compensation.

This work incorporates the sources of different nations, sources where the common denominator has been impartiality.



**This volume is an impartial work.**

**The scientific historian presents events, not passion.**

**And this volume is based on events, not passion.**

**History without conscience is not history.**

**This volume is an interpretation of history through conscience.**

**The search for truth in history is to seek God.**

**Compensation for any genocide should not remain God's work alone.**

**Men doing justice are God's tools.**

**This volume is a work of justice  
in the name of the Armenian People,  
in the name of the Just God.**

#### **EDITORIAL STAFF**

#### **EDITORIAL STAFF**

**Dr. Arshalouys H. Topalian**

**Mr. Levon Vartan**

**Mr. Jirair Tanielian**

**Mr. Antranik Dakessian**

#### **EDITOR-IN-CHIEF**

**Father Antranik Granian**